

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԴԱՆԻԵԼ ՎՐԴ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԾՆՆԴ. Գ. 1-7-Ի ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ
ՆԱՅ ՊԱՐԱԿԱՆՈՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Աղամի ու Եւայի մասին հայ պարականոն գրականության ընդհանուր նկարագիրը. Նին Կրականարանի պարականոն գրքերը հինկրականարանյան աստվածաբանական մտքի հաջորդական զարգացման արդյունք են, որոնք անուղղակի կերպով վկայակոչվում են նաև Նոր Կրականարանում: Պարականոն գրականությունը լի է մտահայեցողական աստվածաբանական նորություններով: Որոշ դեպքերում գործ ունենք մարդկային պարզ հեղափոխություններով բավարարող յուրահատուկ փորձերի հետ, քանի որ սուրբգրային աստվածաբանությունը որոշ թեմաներ պարփակում է անբնական խորհրդի եզրագծով: Ուրեմն, կարելի է ասել, որ հինկրականարանյան գաղափարները ներշնչման աղբյուր են եղել պարականոն գրականության համար: Նինկրականարանյան պարականոն գրքերը ոչ միայն արտացոլում են Նին Կրականարանի, այլև հեթանոս աշխարհի լեզվամտածողությունը, դրանք մի շար կարևոր փուլ են կազմում հրեական և հեթանոսական աշխարհները միմյանց կապելու բարդ գործընթացում: Ընդհանրական Եկեղեցին պահպանել է Նին Կրականարանի պարականոն գրքերը և հաճախ դասել երկրորդականոն գրքերի շարքը, քանի որ դրանք նկատում էր որպես Նին Կրականարանը քրիստոնեությանը կապող կարևոր օղակ:

Նինկրականարանյան գաղափարները, որոշ ձևափոփոխություններ կրելով պարականոն գրականության մեջ, «վերադառնում են» Սուրբ Գիրք՝ Նոր Կրականարանի սահմաններում՝ Sitz im Leben-ի (հայերեն՝ կացութաձև) ազդեցության միջոցով: Այսպիսով, նորկրականարանյան Sitz im Leben-ը նոր փորձեր է ներմուծում, որոնք Նոր Կրականարանի գրքերում նորովի են գործածվում և համաձայնում բոլորովին նոր ճշմարտության հետ: Չնչին բացառություններով պարականոն գրքերը մեզ են հասել քրիստոնեական եկեղեցիների շնորհիվ: Եկեղեցին պահպանել է մանավանդ այն պարականոն գրքերը, որոնք շեշտում են ապաշխարության գաղափարը: Պարականոն որոշ գրքեր այնպիսի փոփոխությունների են ենթարկվել, որ ընդամենը մեկ հրեական աղբյուրի հիման վրա գրքերի ամբողջական խմբեր են գոյացել:

Նույնն է իրավիճակը նաև Նայ Առաքելական Եկեղեցում պահպանված Ադամական գրականության պարագային: Այլ խնդիր է, որ այդ գրականությանը Նայ Առաքելական Եկեղեցին վերապահումով է մոտեցել՝ դրանց «կեղծ», «ծածուկ», «անվավեր», «անկանոն» որակումներ տալով: Մեզ են հասել առավել տարածված եւ հաճախ ընթերցվող պարականոն գրքերի բազում խմբագրություններ ու տարբերակներ:

Ադամի ու Եւայի կյանքը դրախտից արտաքսված նախածնողների ճակարագրի մասին պատմող հունարեն լեզվով գրված (Ք. հ. Ա. դար) հրեական պատմվածքների մի շարք է, որը պարզապես սուրբգրային նախապարմության առաջին գլուխների միդրաշական (ժամանակակիցներին հասկանալի հասկացություններով Աստվածաշնչյան թեմաներով գրված գործեր) ընդարձակումն է: Այս գործը մեզ է հասել երեք խմբագրություններով: Նամատար խմբագրությունը ամբողջությամբ պահպանված է հունարեն եւ հայերենի է «Յայրնութին Մովսիսի»¹ վերպատությամբ: Առաջին չորս գլուխները ընդարձակ կերպով ներկայացնում են Ծննդ. Դ. 1-25-ը, իսկ 15-25 համարներում ակնարկ կա Ծննդ. Գ. 1-7-ի մասին՝ յուրահատուկ բազում մանրամասներով երանգավորված: Ադամին գայթակղեցնելու համար Սաբանան օգտագործում է օձին՝ որպես ամենախորամանկ կենդանի, իսկ Եւային հայրնվում է հրեշտակի կերպարանքով: Նկրտ խոսվում է Ադամի հիվանդության, մահվան եւ թաղման, նաև Սեթին փոխանցված հատուկ ավանդույթների մասին:

«Յայրնութին Մովսիսի» երկրորդ եւ ընդարձակ խմբագրությունը՝ «Վարք Ադամայ եւ Եւայի» վերնագրով, մեզ է հասել հին սլավոներեն, վրացերեն, լատիներեն տարբերակներով՝ «*Vita Adae et Evae*»²: Այսպես նորություն են հեղինակ թեմաները. Ադամի ու Եւայի ապաշխարությունը (§ 1-8), Սաբանայի անկումը (§ 12-17), Եւայի երկրորդ գայթակղությունը (§ 18-22), Սեթին փոխանցված հայրնությունը (§ 25-29), Եւայի կրակը (§ 49-50):

Երրորդ խմբագրությունը, որ մեզ է հասել բավական մեծ թվով ձեռագրերով, ամբողջությամբ պահպանված է գրաբար տարբերակով: Այս տարբերակը վերոհիշյալ երկու խմբագրությունների գուցակցումն է, լույս է ընծայել Մ. Ե. Սթոունը՝ երեք ձեռագրերի համեմատությամբ³ եւ կրում է «Ապաշխարութիւն նախահարն մերոյ Ադամայ» վերնագիրը⁴: Ինչպես նշում է հրապարակիչը, հարկապես վերջին, գրաբար խմբագրությունն առանձնանում է յուրօրինակությամբ, թեպետև նրա հիմքում ընկած են ուշ շրջանի՝ ավելի սպույզ ԺԷ. դարի ձեռագրեր:

Ադամի վերաբերյալ հայ պարականոն գրականությունն առաջին անգամ հրապար-

1 Այս անվանումն է տվել բնագրի հրապարակիչը. **C. Tischendorf**, *Apocalypses apocryphae Mosis. Eisdrae, Pauli, Johannis, item Mariae dormilio* (Leipzig 1866 (repr. Hildesheim 1966), էջ 1-23:

2 Նրբրկ. **W. Meyer**: *Abhandlungen der Bayerischen Akademie der Wissenschaften*, մասնաշար XIV/3, München, 1878, էջ 187-250:

3 Երուսաղեմի Նայոց Պատրիարքարան, ձեռ. № 1458, էջ 380-431 (ԺԷ. դար), № 1370, էջ 127-150 (ԺԷ. դար). Մաշգրոյի անվան Մատենադարան, ձեռ. № 3461 (1662):

4 “The Penitence of Adam”, Leuven, 1981, *Corpus Scriptorum Christianorum Orientalium*, vol. 429, բնագիր (էջ XIV+29) եւ 430 թարգմանություն (էջ XX+25).

րակել է Ն. Ս. Նովսեփյանը 1896 թ. Վենետիկում, որն անգլերենի է փոխադրել Ն. Իսավերդենը 1901 թ.⁵ կրկին Վենետիկում⁵:

«Վարք Ադամայ և Եւայի» և «Ապաշխարութիւն նախահարն մերոյ Ադամայ» գրաբար բնագրերի թարգմանությունների կողքին այս տպագրության մեջ տեղ են գտել հունարեն բնագրից թարգմանված հայրվածներ⁶:

«Վարք Ադամայ և Եւայի»-ն միաբարբ գործ չէ: Այն բաղկացած է նախածնողների կյանքի մասին պատմող ավանդությունների⁷ բազում հայրվածներից: Պարակաւնոնի հիմնական թեման և հասկացությունները մարմնում են նրա հրեական ծագումը⁸: Այդուամենայնիվ, կան այնպիսի հայրվածներ, որոնք ենթադրաբար քրիստոնյա հեղինակի են պարկանում: Օրինակ՝ հեղաբրքական է այն հայրվածը, որտեղ խոսվում է Ադամի ու Եւայի ապաշխարության ձևի մասին: Մինչև պարանոցը ջրի մեջ ընկղմված լինելու պարկերը կելրական եկեղեցում գործածված ապաշխարության ձևն է հիշեցնում⁹: Ինչպես նկարել է Սյրեմպենը¹⁰, իր հիվանդ հոր համար Սեթի փնորած «եղն ցնծութեան» և Ադամի մահվան նկարագրության հայրվածում թաղման արարողությունը վստահաբար քրիստոնեական ծագում ունեն: Դրանք կարող են ընդմիջարկություններ լինել նախածնողների վերաբերյալ բոլոր ավանդությունների աղբյուր հանդիսացող հրեական նախնական բնագրում: Կոչելկյակի¹¹ կարծիքով «Վարք Ադամայ և Եւայի»-ն հավանաբար գրվել է սեմական որևէ լեզվով (բնօրինակից հետքեր չեն մնացել), որի հեղինակը, հավանաբար, Քոմբանի միաբանության հետ կապված պաղեստինյան հրեա է եղել:

Ս. Մենդական¹², այս գործի ծագումը քննելով, գրում է՝ վիճելի է, թե այս պատմվածքները գրի են առնվել հրեա հեղինակների՝ կողմից և հետո անցել քրիստոնեական գրաքննություն, թե՛ ընդհակառակը՝ հրեական աղբյուրների հիման վրա քրիստոնեական բանաբաղություններ են: Ադամի ու Եւայի մասին մտավարժություններ վերաբարդվում էին ինչպես հրեական (Փիլոն Ալեքսանդրացի, 4 Եզր., 2 Բարութ), այնպես և քրիստոնեական (հմմտ. Ծնող. Ե. 12-21, Կորնթ. ԺԵ. 42-50) շրջանակներում: Այդ մտազննությունները կապված են նաև գնոստիկյան գրականության հետ, որտեղ արդեն գլխավոր դերում հանդես է գալիս Սեթը:

Նունական տարբերակից թարգմանված գրաբար «Ապաշխարութիւն նախահարն մերոյ Ադամայ»-ն ունի նույն սկիզբը, ինչ Vita 1-22-ը, իսկ դրան հետևում է «Յայտնութիւն Մովսիսի» երկը: Այս տարբերակում չկա Ադամի՝ Սեթին փոխանցված Ադամի

5 Տե՛ս J. Issaverdens, The Uncanonical Writings of the Old Testament Found in the Armenian MSS. of the Library of St. Lazarus, Venice, 1901, 2 ed., Venice, 1934:

6 Նմմտ. S. E. Robinson, The Testament of Adam. An Examination of the Syriac and Greek Traditions, Chicago, 1982, էջ 12:

7 Որպես գրական ժանր՝ ավանդությունը Ս. Գրքում տարբեր նշանակություն ունի ընդհանուր գրականության մեջ գործածվող եզրույթից:

8 H. L. Strack-P. Billerbeck, Kommentar zum Neuen Testament aus Talmud und Midrasch, München, 1926, III, 478. L. Ginzberg, Legends of the Jews, Philadelphia, 1927, v. 114:

9 Տե՛ս L. Gougaud, Les chrétientés celtiques, Paris, 1911, 100. Christianity in Celtic Land, London, 1932, 95:

10 Տե՛ս "Podręczna Encyklopedia Biblijna", red. E. Dąbrowski, I, Poznań, 1959, էջ 22:

11 Տե՛ս K. Kościelniak, Złe duchy w Biblii i Koranie, Kraków, 1999, էջ 336:

12 Տե՛ս S. Mędala, Wprowadzenie do literatury międzytestamentalnej, Kraków, 1994, էջ 222:

հայրությունը (Vita 25-29), Եւայի կրակը (Vita 49, 1-50, 2): Նախածնողների ապաշխարության նկարագրության մեջ փորձի դերում հայտնվում է Սաբանան: Նա կրկին գայթակղում է Եւային, սակայն Ադամը բացահայտում է դավը (Ապ. 9-11): Նեպո Ադամը ծանոթանում է Սաբանայի մեղքի պարմությանը, որը մերժել էր Աստծու պարկերով սրբեղծված մարդ արարածին երկրպագել (Ապ. 17-12):

Խնդրո առարկա պարականոն այս գործը առանձնապես գերակշռող աստվածաբանական որևէ միտք չի բովանդակում: Այնուամենայնիվ, այսպեղ առկա են անդրշիրիմյան կյանքի, վերջին դարաստրանի և մեռելների հարության մասին գաղափարներ: Չկա նաև «Ադամական՝ սկզբնական մեղքի» վարդապետությունը՝ քրիստոնեական ըմբռնումով: Ադամը ներկայացված է որպես կարարյալ մարդ: Նույնպես և Եւան, թեկուզ րկար է, բայց բնությամբ չար չէ: Երկուսն էլ ապաշխարանքից և մահից հեպո հավիտենական կյանքի հնարավորություն ունեն:

2. Սաբանայի կերպարը «Ապաշխարութիւն նախահարն մերոյ Ադամայ»-ի մեջ. Նին Կրակարանի գրքերի համեմատությամբ պարականոն գրքերն ավելի հաճախ են դեռերին ներկայացնում որպես Աստծո և մարդկանց հակառակորդներ: Նրանք հանդես են գալիս որպես փորձիչ, ամբաստանող կամ հիվանդությունների ու փորձությունների պարծառ: Թեպետ Նին Կրակարանը եւս գերծ չէ ժողովրդական կամ օրար դիվաբանության (demonology) ազդեցություններից (հմմտ. **Ասմողեսը**՝ Տոր. Գ. 8, Զ. 14-17), այնուամենայնիվ, պարականոն րարբերակները լի են րարբեր ծագում ունեցող առասպելներով ու հայրություններով: «Ապաշխարութիւն Ադամայ»-ի հեղինակին, սակայն, ինչպես նաև այդ շրջանին պարկանող այլ պարականոնների հեղինակներին, չի հեպաքրքրում ո՛չ երկիրը բնակեցնող դեռերի, ո՛չ էլ դժոխային էակների աստիճանակարգության մասին «վարդապետությունը»: Այս գործի միակ բացասական կերպարը Սաբանան է՝ որպես չարի գորության անձնավորում երկրի վրա: Աստվածաշնչան այս անունը նա կրում է ուշ շրջանի պարականոն գրվածքների ու ժողովրդական ավանդությունների անաողջ հեպաքրքրությունից գերծ միջկրակարանյան և թաննախական գրականության մեջ: Բումբանում գլխավորապես հանդես է գալիս Բելիար անվան րակ՝ որպես խավարի գորության անկախ իշխան¹³: Նեպագայում պարականոն գրքերը նրա մեջ րեսնում են ապստամբած հրեշրակների առաջնորդին¹⁴: Նրանց անուններն աստիճանաբար սկսում են ավելանալ՝ դրանով արաահայրելով նրանց գործունեության ավելի լայն շրջանակները:

«Ապաշխարութիւն Ադամայ» պարականոն գործում Սաբանայի մասին ուսումնասիրության մեջ Ա. Տրոնինան¹⁵ նկատել է, որ այս գործի հեղինակն իր պարմության մեջ հիմնականում հեպեսում է Ծննդոց գրքին՝ օգտվելով, իհարկե, թարգումական ավան-

13 Սանրաման րեն **W. Foerster**, *Satanas. A. Qumran und die spätyüdische Satanologie*, TWNT VII, էջ 152-156:

14 Jub. 10, 11; 23, 29; 40, 9; 46, 2; 50, 5; Męcz. Iz. 2, 2. Testamentach 12 Patriarchów (np. Gad 4, 7; Dan 3, 6), Test. Hioba.

15 Տեն **A. Tronina**, *Tajemnica Złego. Szatan według apokryficznej Pokuty Adama*, Roczniki Teologiczne 44 (1997), տարրակ 1, էջ 89-101:

դուրսն էր: Վստահաբար, հեղինակը նկարի ունի Սիր. ԻԵ. 24 («Ի կնոջ է սկիզբն մեղաց, եւ վասն նորա մեռանիմք ամենեքեան») եւ Իմաստ. Բ. 24 («Նախանձու բանասրկոյին եմուք մահ յաշխարհ. եւ փորձեն զնա, որ նորա վիճակին սակի եւ») հայրնի դրոյթները: Աստվածաշնչային այս հղումներէից երկրորդը մարդկային անկման պարճառը բացահայտըն արեւմտում է սաւրանայական նախանձի մեջ, եւ ուրեմն դրախտային օձի կերպարի մեջ նկարում է Սաւրանայի անձը: Նունարեն «ὁ δίαβολος» բառը LXX-ում թարգմանությունն է եբրայերէն sādān «սաւրան» - հակառակորդ բառի: Ընդ որում, երկու անգամ (Ա. Մնաց. ԻԱ. 1 եւ Սաղմ. Ճ. 6) հույն թարգմանիչները շրջանցում են որոշիչ հոդը՝ դրանում արեւմտելով եբրայական sādān «սաւրան» չանձնավորված բառի պարզ փոխադրում: «Ապաշխարութիւն Ադամայ»-ն հեկտոտակաւորէն հարազատ է մնում սաւրանա ձեւին, ինչն ուղղակիորէն կարող է վկայել գործի սեմական ծագման մասին¹⁶:

Երկում Սաւրանայի անունը հայրնվում է 24 անգամ: Նրա մասին չի հիշարարվում առաջին գլոխներում (նախածնողների սնունդ հաթայթելու եւ ապաշխարութեան դրվագներում), ինչպէս նաեւ վերջում (Ադամի ու Եւայի մահվան եւ թաղման դրվագներում):

Ի արարելություն հունարեն եւ լատիններէն արարեալներէի, հայերէնն ունի հստակ եւ արամաբանական կառուցվածք: Դա պարզորոշ երևում է նաեւ գործի՝ չարի ծագման մասին բացարարությունից, դրա պարճառը Սաւրանան է, որ օձին օգտագործում է որպէս «գործիք»: «Գազանը» մարդկային թշնամու ավելի ընդհանուր որոշիչն է, որ է անկյալ հրեշտակը: Չարի այս երեք հիմնական անվանումները թույլ են տալիս քննութեան ենթակա գործը բաժանել երեք մասի. ա) Սաւրանան որպէս Եւայի մեղքի պարճառ (Թ. 24-25), բ) Գազանը դրախտի ճանապարհին (Լ. 5 - ԽԳ. 14), գ) Օձը որպէս Սաւրանայի գործիք (ԽԴ. 14-30):

ա) Սաւրանան որպէս Եւայի մեղքի պարճառ (Թ. 24.4).

«Ապաշխարութիւն Ադամայ»-ի 9-11 գլոխները համապարասխանում են լատիններէն «Վարք Ադամայ եւ Եւայի»-ի համապարասխան հարվածներին եւ նաեւ եթովպական «Ադամի եւ Եւայի բախումը Սաւրանայի հետ» գործին¹⁷: Սաւրանայի անունն այս հարվածում արվում է վեց անգամ. «Թ.1 Յորժամ կարարեցան ատուք ութ եւ տասն լալոյ նոցա. յայնժամ եղև Սաւրանայ ի ձեւ քերթէի ի գարդ վայելչութեան եւ գնաց ի Տիգրիս գետ իտաբել գետա. Թ.2 եւ արքատուք նորա իջանէին ի վերայ գարդու նորա մինչև յերկիր: Եւ ասէ Սաւրանայ ցետա. Ել ի ջրոյ այդի եւ հանգիր զի լուա Աստուած ապաշխարութեան ձեր, քեզ եւ Ադամայ ամոն քո. Թ.3 վասն զի մեր աղաչեցաք զԱստուած. Թ.4 եւ Աստուած առաքեաց զիս հանել զձեզ այդի եւ տալ ձեզ զկերակուրն ձեր վասն որոյ ապաշխարեցէքն. Թ.5 քանզի այժմ առ Ադամ գնացի եւ նա առաքեաց զիս առ քեզ եւ ասէ. զնա կոչեա զկին իմ որդեակ. եւ յայժմ եկ գնացուք առ Ադամ եւ տարայց զձեզ ի արեւի ուր կերակուր ձեր իցէ:

¹⁶ Ավելի շուր արամերէն «շաւրանա», քան թե եբրայերէն «սաւրան»:

¹⁷ Տմտ. S. C. Malan, *The Life of Adam and Eve, also called The Conflict of Adam and Eve with Satan*, London, 1882, էջ 35:

Ժ.1 Եւ եղեալ Եւա ի ջրոյ անտի եւ եղև մարմինը նորա իբրև զխոյր ցամաքեալ զի ի ջրոյն այլակերպեալ էին մարմինը նորա, բայց պարկեր փառաց նորա կայր պայծառ. Ժ.2 իբրև եւ նա ի ջրոյ անտի եւ անկեալ եկաց ի վերայ երկրի մեծաւ աշխարհութեամբ ատուք երկուս. զի ամենուն չէր կարող շարժիլ ի փեղոջէն. եւ ապա յարեաւ. եւ Սաւրանայ եւ առաջնորդեաց նմա ուր եւ Ադամ էր: Ժ.3 Եւ իբրև երեսն Ադամ զՍաւրանայ եւ զԵւա զի գայր զհեւր նորա, եկաց լալիս մեծ եւ աղաղակեաց մեծ բառքառով եւ ասէ ցԵւա. Ո՛ր է պարուէրն իմ ապաշխարութեան գոր երբոյ քեզ. զիա՛րդ մոլորեցար դու զհեւր դորա գալ. որով աւարաբացար ի բնակութենէ մերմէ:

ԺԱ.1 Զայս իբրև լուսա Եւա զիւրաց եթէ Սաւրանայ է որ խաբեաց զնա, անկաւ առաջի Ադամայ. այնուհետեւ կրկին ցաւր Ադամայ յառեալսն իբրև երեսն զԵւա արաւապանս կնոջ իւրոյ, զի լքաւ եւ անկաւ իբրև զմեռեալ. ԺԱ.2 Կրքմեցաւ եւ աղաղակեաց հեծութեամբ մեծաւ եւ ասէ ցՍաւրանայ. զիա՛րդ այդչափ մարտի դներ ընդ մեզ, կամ զի՛նչ մեղանք են մեր առ քեզ, զի հաներ զմեզ ի փեղոջէն մերմէ. ԺԱ.3 միթէ զփառսն քո հանաք մեր ի քէն. միթէ մերժեցար զքեզ լինել մեզ սպացուածս. զի մարտնչիս ընդ մեզ ի փառապարտոց»:

Նոկորակնայ այս հարցադրումները լավագոյնս բացահայտում են այն հարցերի բուն էութիւնը, որ առաջադրում է հեղինակը: Սրան հաջորդող ամբողջ հազգադան¹⁸ զարգացումն է ասարվածաբանական այս խնդրի, որը միայն մասնակիորեն է առնչվում սուրբգրային պարումին: Միակ մեկնակեւոր Ծննդ. Գ. 24-ում դրախտը պահպանող քերովրենների մասին հիշարարարութիւնն է: Նոկիակն այն միացրել է Տյուրոս թագավորի դեմ մարգարեական կանխագուշակումին, որում ավանդութիւնը փոխում էր Սաւրանայի անկման պարկերը¹⁹: Այս կերպով հեղինակը լուսաբանում է մարդկային անկման ողբերգութեան մասին ճշմարտութիւնը: Սաւրանան, որպէս անկալ հրեշտակ, կարող է ընդունել իր նախկին կերպարանքը՝ մարդկանց խաբելու նպարակով²⁰:

Մարդու հանդեպ արմարական իր արելութեան պարճառները Սաւրանան բացահայտում է բնագրի 12-17 հարվածում՝ Ադամի առջև կարարած խոստովանութեան ժամանակ. «ԺԲ.1 Եւայ եւ Սաւրանայ լալիս մեծ եւ ասէ ցԱդամ. Ամենայն ժպրիտիւնք իմ եւ փրմութիւնք վասն քո եղեն. զի վասն քո եւայ ես ի բնակութենէ իմմէ, եւ վասն քո աւարաբացայ ես յաթոռոյ քերթէիցն, որ փարածեալ հովանի ունէին ինձ. վասն քո կոխեցին ուրք իմ զերկիր: ԺԲ.2 Պարասխանի եր Ադամ եւ ասէ ցնայ. զի՛նչ <մեղք> են մեր առ քեզ զի գայս ամենայն արարեր ընդ մեզ»: Այսպէղ հեւրեւում է երկնքում հրեշտակներին ապստամբութեան մասին ռաբբինական միդրաշի հայրնի պարմութիւնը: Ադամին ուղղված՝ «քո պարճառով» Սաւրանայի մեղադրանքը այսպէղ կրկնվում է երեք անգամ: Սաւրանայի արելութեան պարճառի մասին Ադամի հարցումին հնչում է այն պարասխանը, թէ Ադամին շնորհված բարձր կոչումն է Սաւրանայի արելութեան պարճառը:

Լարիինական փարբերակը Սաւրանայի շուրթերին է հարմարեցնում Բաբելոնի իշ-

18 Բարդայարարական նշանակութիւն ունեցող եւ ազարտեն մշակված բանավոր ավանդութիւն. խիստ փարբերվում է իրավական հիմքի վրա զարգացած ավանդութիւններից, որ է *հայրախաւե*:

19 Եզ. ԻԸ, 11-19. Պահապան հրեշտակ բառը հայրնվում է այնպէղ երկու անգամ (13, 16):

20 Նման. A. Tronina, նշվ. աշխ., էջ 91:

խանի սրբապիղծ խոսքերը (Ես. ԺԴ. 13), որոնք հրեական ավանդությունը կապում էր հրեշտակների ապստամբության հետ²¹: Մեր բնագրում առկա են նաև հրեշտակների ավագության խնդրին վերաբերող բանավեճի հետքեր: Այդ խնդիրն ի հայտ եկավ Նոր Ուխտի նախաշեմին, որը մինչ այսօր արդիական է: Բավական է միայն հիշել այն պետությունը, թե զալիք փեղկերում արդարների փառքը կգերազանցի հրեշտակների փառքին (Գիրք եւ փեսիլ Բարութաց, աստրական բնագիր ԾԱ. 10-14):

«Ապաշխարություն Ադամայ»-ն հրեշտակների անկման պարճառը փեսնում է Արարչի պարկերով եւ նմանությամբ (Ծննդ. Ա. 26 եւ այլն) արարված Ադամին չերկրապագելու իրողության մեջ: Սուրբգրային այս արտահայտությունը, «արասցուք մարդ ըստ պարկերի մերում եւ ըստ նմանութեան», խնդրո առարկա պարականոնի կենտրոնական բաժնում փեղ գրած Սեթի եւ Գազանի հանդիպման պատմի գլխավոր առանցքն է:

Սաբանայի «խոստովանությունը» ավարտվում է դեպի երկիր ապստամբ հրեշտակների արքաքսումով, իսկ մինչ այդ Սաբանայի զբաղեցրած «աշխարհ-բնակարանը» պիտի բաժին ընկներ Ադամին: Դա իր հերթին մեռելներից փառավոր հարության ավերիսն է նաև, որի մասին խոսում է Եւան իր խոստովանության վերջում. «ԽԴ.28.2 Դարձաւ Ադամ եւ ասէ ցԱստուած. Տէր իմ, աղաչեմ գրեզ, քոր ինձ ի ծառայն կենաց զի կերայց ես մինչ չեմ ելեալ իցեմ ի դրախտէ: ԽԴ.28.3 Եւ ասէ Տէր ցԱդամ. Ոչ ունիս առնուլ ի նմանէ ի կեանս քո, քանզի հրաման երու սերորէից շուքանակի պահել զնա զինուք վասն քո. զի այլ մի եւս ճաշակեցես դու ի նմանէ եւ լինիցիս անմահ, եւ ասես եթէ անա որ ոչ մեռայց, եւ պարծեսցիս ի նմա, եւ յաղթեսցես դու պատերազմին, գոր եղեալն է թշնամոյն ընդ քեզ. ԽԴ.28.4 այլ իբրեւ երանիցես դու ի դրախտէ անարի, եւ պահեսցես զանձն քո ի չարախաւսութենէ, ի պոռնկութենէ, ի շնութենէ, ի կախարհութենէ, յարձաթսիրութենէ, ի գաշաքաղութենէ, եւ յամենայն մեղաց, եւ ասպա յարիցես ի մահուանէ անարի, որ լինելոց է յարութիւն. եւ յայնժամ քացից քեզ ի ծառայն կենաց եւ լինիս դու անմահ մինչեւ յաւիտեան»:

Այս եռամասնյա երկի՝ triptich-ի իրար միացնող հարվածների ներփակումը (հաջորդական խոստովանություններ Սաբանա-Ադամ-Եւա) կարող ենք գրել «թշնամի» բառի մեջ, որը հնչում է Ադամի շուրթերից նրա աղոթքի վերջում. «ԺԷ.1 Զայս իբրեւ լուաւ Ադամ ասէ առ Տէր. Տէր անձն իմ ի ձեռս քո ի բաց արա յինէն զթշնամիս իմ որ կամի մոլորեցուցանել զիս որ ի խնդիրս եմ ելեալ լուսոյն գոր կորուսի»: Վերջում Աստուած հաղթանակ է խոստանում Ադամին. «ԽԷ.39.2...բայց զուրախութիւն նոցա դարձուցից ի քորսմութիւն. եւ զքորսմութիւն քո դարձուցից յուրախութիւն. արարից գրեզ սկիզբն ուրախութեան եւ նսրեցուցից գրեզ յաթոռ նորա, որ իսրեացն գրեզ ԽԷ.39.3 եւ արկից գնուսա ի փեղի իսարաի եւ մահու»:

Այդ թշնամության հիմքը, փաստորեն, Աստուած պարկերով եւ նմանությամբ արարված մարդկանց անօրինակ պարվի արժանանալու մեջ է: Պարականոն գործի կենտրոնական հարվածը զարգացնում է այս թեման՝ Սեթի եւ Գազանի խորհրդանշական հանդիպման փեսարանում:

²¹ Վուլգատայում գործածված է Լյուցիֆեր անունը, որ վկայում է Ներոնիմոսի՝ ռաբբինական մեկնաբանությանը ծանոթ լինելու մասին:

բ) Գազանը դրախտի ճանապարհին (Լ. 5 - ԽԳ.14). Մահվան մահճում Ադամի արած «խոստովանությունը» նախամուրն է գլխավոր թեմայի: Այսպեղ նախահայրը Սերին պարմում է դրախտում անկման պարմությունը. «ԼԲ.7.1 Ասէ ցնա Ադամ. Իբրեւ արար գմեզ Աստուած, զիս եւ գմայր քո, հրաման եւր մեզ ի ծառոյ անրի չուրել. ԼԲ.7.2 խափեաց գմեզ Սաւրանայ ի ժամուն իբրեւ վերացան հրեշտակքն որք պահապանք էին ծառոյն երկիր պագանել Աստուծոյ. յայնժամ եւր ուրել Սաւրանայ ի պրոյոյ անրի Եւայի. ԼԲ.7.3a եւր ուրել Եւա ինձ, իբրեւ ոչ գիւրել: ԼԲ.7.3b քանզի, որդեակ իմ Սէթ, բաժանեաց Աստուած գորախսրն ինձ եւ մաւր քո Եւայի. որպէս զի պահեսցուք մեք զնա, ինձ եւր զկողմ արեւելից եւ զհիւսիսի, եւ մաւր քո զկողմ արեւմտից եւ զհարաւոյ»: Ամբողջ այս հարվածը գրեթե զուգահեռ է աստվածաշնչյան պատմին (Ծննդ. Գ. 1-6). ավերացված է միայն արարածների երկնային երկրպագության գաղափարը, որ փղի է ունենում ամեն առավուր. «ԼԳ.1 Եւ ունեաք մեք երկուրասան հրեշտակք որ շրջէին ընդ մեզ իւրաքանչիւր վասն պահպանութեան գորախսրին մինչեւ ի ժամանակ լուսոյն. ԼԳ.2 քանզի հանապազ ար ելանէին երկիր պագանել Տեառն, ի ժամանակին իբրեւ նոքա գնացին յերկինս յայնժամ խափեաց Սաւրանայ գմայր քո, եւ եւր ուրել նմա ի մրգոյ անրի. զիւրաց Սաւրանայ եթէ եւ ոչ էի առ նա²² եւ ոչ հրեշտակք, յայնժամ եւր ուրել ԼԳ.3 յերոյ եւ եւր ինձ»: Պարականոնի հեղինակն ընդգծում է, որ մահը աշխարհ եկավ նախածնողների մեղքի պարճառով: Այս գաղափարի (Սիր. ԻԵ. 24, Իմաստ. Բ. 24) վերջնական զարգացմանը հանդիպում ենք ասորական Բարուքի մեջ (ԺԷ. 3, ԺԹ. 8, ԻԳ. 4, ԾԴ. 15): Սերի կերպարը հանրաճանոթ էր Ա. դարի հուդայական գրականությանը, որպեղից եւ պիւրի անցներ քրիստոնեական ավանդությանը («Նիկողեմոսի ավերարան»): Ավանդությունը շեշտում էր Սերի նմանությունն Աստծուն՝ ելնելով Ծննդ. Ե. 3-ից, ինչպէս Ադամն սրեղծվեց Աստծո պարկերով ու նմանությամբ, այնպէս էլ նրա որդին «ծնաւ ըստ կերպարանաց իւրոյ եւ ըստ պարկերի իւրում»: Այս հանգամանքը Սերին փալիս է Աստծո հովանավորության երաշխիքը եւ դարձնում երկնային խորհուրդների փոխանցիչը: Նենց այս մոտիվը հարուկ շեշտադրությամբ է «Ապաշխարություն Ադամայ»-ի կենտրոնական բաժնում: Մահամերձ նախահայրը՝ Ադամը, իր կնոջը սիրելի որդու հետ ուղարկում է դրախտ, որպեսզի հրեշտակներից դրախտային ձեթ խնդրեն՝ որպէս իր ցավերի բախտան. «ԼԷ.10.1 Գնացին այնուհետեւ Սէթ եւ Եւա ի կողմ ի դրախտին. մինչդեռ երթային, ետես Եւա գորդին իւր զի գազան մի մարտնչէր ընդ Սեթայ եւ խաճանէր զնա. լալ սկսաւ Եւա եւ ասէ. ԼԷ.10.2 ...զի եթէ եկեսցէ ար դարաստանին, ամենայն մեղաւորք մեղադիր լինիցին ինձ եւ ասացեն թէ մայրն մեր ոչ լուա պարտիրանին Տեառն Աստուծոյ: ԼԷ.10.3 Եւ գոչեաց Եւա ի վերայ գազանին եւ ասէ. Ով գազան, դու զիա՞րդ դու ոչ երկեար ի պարկերեղ Աստուծոյ, զի համարձակեցար մարտնչել ի պարկերոյ Աստուծոյ. եւ կամ զիա՞րդ բացաւ բերան քո եւ զարացան ժանիք քո եւ խոզացաւ մազ քո. եւ զիա՞րդ ոչ յիշեցր զհնազանդութիւն որ յառաջն էիր, զի բացաւ բերան քո ի պարկերոյ Աստուծոյ:

ԼԸ.11.1 Յայնժամ գոչեաց գազանն եւ ասէ ցԵւա. Ապաքէն վասն քո եւ ժպրիութիւնք

22 Նմնր. Gen R 19, 2; Abot R. Natan A 1:

մեր, զի ի քննել արիւնակն. ԼԸ.11.2 զիա՛րդ բացաւ բերան քո համարձակել եւ ի ուրել ի մրգոյ անոթի. վասն որոյ պարտիրեաց քեզ Աստուած եթէ մի ուրել ի նմանէ. ԼԸ.11.3 մինչև փոխեսցէ մեր ամենեցուն բնութիւնք. դու այտուհեւրեւ ոչ կարես հանդարտել որ խոսեցայց առ քեզ, կամ եթէ սկսայց յանդիմանել գրեզ:

ԼԹ.12.1 Յայնժամ ասէ Սէթ զգազանն. Խցցի՛ բերան քո, ո՛վ Սաւրանայ. ի բաց գնա ի պարկերէ Աստուծոյ, մինչև <հասցէ ար> յորում Աստուած ածցէ գրեզ ի յանդիմանութիւն. ԼԸ.12.2 յայնժամ ասէ ԳՍէթ. Ահա ի բաց կամ ի պարկերէ Աստուծոյ. ԼԸ.12.3 փախարեա եղև գազանն ի նմանէ:

Խ.13.1 Եւ գնաց Սէթ Եւայի հանդերձ մերձ ի դրախտն...»:

Մեջբերված հարվածը բնագրային ավարտուն ամբողջություն է, որի վկայությունն է հարվածի սկզբում եւ վերջում կրկնվող արտահայտությունը: Սեթի ճանապարհին կանգնած եւ նրա ընթացքը խանգարող խորհրդավոր Գազանը՝ Սաւրանայի անձնավորումն է: Առաջին անգամ նրա մասին խոսում է Ադամը, երբ հեռվից լսում է իր կնոջ լացի ձայնը ծննդաբերության ժամանակ. «Ի.1c Եւ ապա լուաւ Ադամ զձայն աղաչանացն Եւայի ի մուրս արևու եւ ասէ Ադամ ի սիրտ իւր. ձայնն այն մարմնոյ իմոյ է եւ լալիւնն. յարեայց եւ գնացից առ նա եւ Կոնից թէ վասն որոյ աղաղակէ. գուցէ դարձեալ գազանն մարտեաւ ընդ նմա»: Այս բառերն ակնարկում են Եւայի առաջին անկումը եւ ներկայացնում են Ծննդ. Գ. 15-ի՝ «նախավերարանի» միդրաշական մեկնությունը: Պարականոնի լարիններեն փարբերակը, սուրբգրային պարամի հերետոքականությամբ, օգտագործում է *serpens* (օձ), այն դեպքում, երբ հայերեն բնագիրը գործածում է «գազան» բառը՝ ավելի ընդհանուր, վայրի, դաշտային կենդանու իմաստով, ի փարբերություն ընդանի կենդանու²³: Սա, անկասկած, Ծննդ. Գ. 1-ի «եւ օձն էր իմաստրագոյն քան զամենայն **գազանս** որ ի վերայ յերկրի» երբայերեն «խայառ»-ի համապարասխան բառն է:

«Ապաշխարություն Ադամայ»-ից վերոբերյալ հարվածում հստակորեն շեշտվում է Եւայի մեղքը՝ աստվածաշնչյան իմաստության գրքերի ավանդության համաձայն²⁴:

Նրա բողոքը սեփական մեղքի ճանաչումն է, որը հաստատում է Գազանի ծաղրական պարասխանը: Միայն Սեթի՝ «Աստծո պարկերի» համառ միջամտությամբ է հեռացվում մահացու վրանգը: Միայն նա կարող է դիմակազերծել թշնամուն՝ անվանելով նրան իսկական անունով: Եւ այդ ժամանակ է միայն, որ Սաւրանան սրիպված է ճանաչել «Աստծո պարկերի» առավելությունն իր հանդեպ եւ զիջել նրան ճանապարհը: Պարականոնում Գազան եզրույթի յոթնապարիկ գործածումն ամենեւին պարահական չէ: Պարականոնի հեղինակն այդպիսով ցանկանում է ցույց տալ սուրբգրային հասկացություններից բխող եւ մեղքի՝ Ծննդ. Գ.-ից բաղված **միստերիան**՝ իր ողջ խորությամբ: Անձնավորված չարը թաքնված է ինչպես *hāyā* «խայա(հ)» «գազան, կենդանի» ընդհանուր բառի, այնպես եւ *nahāš* «նախաշ»՝ «օձ» որակումի տակ: Նախավածի վերջին՝ Սաւրանային վերաբերող մասը միդրաշի ձևով բացատրում է այս երկու բառ-գաղափարների փոխհարաբերությունը²⁵:

23 Տե՛ս I. Miskigian, *Manuale lexicon armeno-latinitum*, Roma, 1887 (repr. Lovanium 1966) գազան բառը թարգմանում է «fera bellua»:

24 Նմմր. Միք. ԻԵ. 24:

25 Նմմր. A. Tronina, նշվ. հոդ., 95:

զ) Օձը որպես Սաքանայի գործիք (ԽԴ.13.30). Դեպի դրախտ անհաջող արշավից հետո Եւան մահամերձ նախահոր մահճի շուրջ է հավաքում բոլոր երեխաներին և բոլորի առջև խոստովանում է, թե «որպես զիա՛րդ եղև յանցանքն» (ԽԴ.15.1): Այսպեղ «գազան» բառի փոխարեն արդեն գործածվում է «օձ» բառը, որ փիրապետող է պարմության եզրափակիչ հալվածում (15 անգամ):

Այս գունեղ հագագադան բազում մանրամասնություններ է պարունակում, որոնք զարգացել են հրեական և քրիստոնեական ուշ շրջանի ավանդություններում: Իհարկե, բոլորի համար էլ երակերը ծննդ. Գ.-րդ գլուխն է: Սուրբգրային բնագրի ինքնապիպ այս ընդարձակաբանությունն սկսում է այն պնդումից, թե Աստված բաժանել էր դրախտի փարածքը երկու մասի: Նյութիս-արեւելյան հալվածը հանձնել էր Ադամի հոգածությանը, իսկ մնացածը՝ Եւայի: Բաժանումը փարածվում էր նաև կենդանական աշխարհի վրա՝ ըստ սեռի: Այժմ միդրաշը, վկայակոչելով ծննդ. Գ. 1-ի բնագիրը, բնւ է հանում անձնավորված Չարին:

«ԽԴ.16.1 Եւ ասէ Սաքանայ ցաճն. Արի եկ դու առ իս եւ ասեմ քեզ բան մի ինչ որ շահ լինի քեզ: ԽԴ.16.2a Յայնժամ եկն առ նա աճն, եւ ասէ ցնա Սաքանայ. ասեմ զի իմաստուն ես դու քան զամենայն գազանս, եւ ես եկի քեսանել զքեզ եւ զքի զքեզ յամենայն գազանս. զի չիք նման հանճարոյ քո. որպէս եւ Ադամ փայր կերակուր ամենայն գազանաց, նոյնպէս եւ դու: ԽԴ.16.2b Եւ ապա յորժամ գնացին գազանքն երկիր պագանել Ադամայ. գնաց եւ Սաքանայ ընդ նոսա եւ ասէ ցաճն. ընդէ՛ր դու երկիր պագանես Ադամայ ամենայն առաւաւր. յառաջ դու ես եղեալ քան զնա. զիա՛րդ երկիր պագանես առաջինդ յերնոյ, այլ պարպ է փոքուն երկիր պագանել առաջին, ԽԴ.16.3 ընդէ՛ր երկիր պագանես, կամ կերակրիս դու յԱդամայ, եւ ոչ կերակրիս դու ի պարոյ դրախտին: Ադէ, արի՛, եկ դու առ իս եւ լո՛ր գոր ինչ ասեմ քեզ. հանցութ զԱդամ ի դրախտէս, որպէս զմեզ. զի դարձեալ մեք մրցութ ի դրախտ անդր: ԽԴ.16.4a Եւ ասէ աճն. Ո՛րպէս եւ կամ զիա՛րդ մարթացցութ հանել զնա ի դրախտէն: ԽԴ.16.4b Ասէ Սաքանայ ցաճն. բեր դու ինձ ի կերպս քո բնար, եւ ես խաւսեցայց ընդ բերան քո բան, որպէս մարթացցութ մեք ազգրել»:

Գործիքային պարճառականության գաղափարի ներմուծումն²⁶ է պարականոնի հեղինակին սուրբգրային թեմայի այսպիսի անձնավորումն հնարավորություն տալով: Նունական բնագիրը շրջանցել է «գործիք» բառը, որը, սակայն, հայերենում բառացի նշանակում է երաժշտական գործիք՝ «բնար»: Այսպիսով, Սաքանան օգտագործում է կենդանիներից իմաստնագույնին (Ծննդ. Գ. 1), ինչպես երաժիշտը՝ երաժշտական գործիքը: Եւ այսպիսի համագործակցությունն է միայն հնարավորություն տալիս խաբել մարդուն: Ինչպես սուրբգրային պարմումի մեջ, այնպես եւ այսպեղ, շեշտը դրված է հոգեբանական նրբություններին ծանոթ լինելու փաստի վրա: Սաքանան, «գուր» հոգի լինելով, կարողանում է վարպետորեն խաղալ ստորին կենդանիների զգացմունքների հետ: Նախ՝ խորամանկորեն մոլորում է օձին, ապա դառնում դեպի կինը: Ընդ որում, որպես անկյալ հոգի, նա կարող է օգտվել հրեշտակի իր նախկին կերպարանից: Եւայի պարմության

26 Դժվար է ասել, թե որքանով է այն հարազատ բնագրին: Նման մոտիվներ հանդիպում ենք նաեւ ուրիշ աղբյուրներում (Gen R 19, 1; Pirke R. Eliezer 13), որոնց գրության ժամանակը, սակայն, դժվար է ճշտել:

շարունակության մեջ կարդում ենք. «ԽԴ.17.1 Եկին այնուհետև երկրքեանն առ իս, եւ կախեցին զոտս իրեանց զորմով դրախտին: Իբրեւ վերացան հրեշտակքն յերկրպագութիւն Տեառն, եւ յայնժամ եղև Սաբանայ ի կերպս հրեշտակի եւ արեւներ զԱստուած զարեւոթիւնս հրեշտակաց. խոնարհեցայ ես առ որմովն, եւ միւր դնէի արեւոթեանց նորայ. ԽԴ.17.2a հայեցայ եւ Կեսի գնա ի նմանութիւն հրեշտակի. դարձեալ իբրեւ հայեցայ եւ ոչ Կեսի գնա: ԽԴ.17.2b գնաց այնուհետև եւ կոչեաց զաւծն, եւ ասէ ցնա. Արի՛, եկ դու առ իս, զի մտից ի քեզ եւ խաւսեցայց ընդ բերան քո, որչափ եւ պարս իցէ ինձ խաւսել: ԽԴ.17.2c Յայնժամ եղև նմա աւծն եւ քնար, եւ եկն դարձեալ ի պարիսպ դրախտին. աղաղակեաց եւ ասէ. Ո՛վ կին, դու որ ի դրախտիդ փափկութեան կուրացեալ ես. արի՛, եկ դու առ իս եւ ասացից քեզ բանս ինչ: ԽԴ.17.2d Ես իբրեւ գնացի առ նա, ասէ ցիս. Դու ե՛ս Եւա. եւ ասացի. Այո՛, եւ եմ: Պարասխանի եր եւ ասէ. ...Ի՛նչ գործես ի դրախտի այդր: ԽԴ.17.3 Ասեմ ցնա. Աստուած եղ զմեզ ի դրախտի պահպանութեան: ԽԴ.17.4 Պարասխանի եր Սաբանայ եւ ասէ ցիս ընդ բերան աւծին. Բարի է գործդ, բայց աղէ ուրիշ դուք յամենայն ծառոցդ որ ի դրախտի աստէն: ԽԴ.17.5 Ասեմ այո՛, յամենայնէ կերակրիմք, բայց միայն ի միտքէն ծառոյ որ է իսկ ի մէջ դրախտիս, վասն որոյ պարտութեաց Աստուած մեզ թէ մի կերակրիք ի նմանէ. ապա եթէ ուրիցէք մահու մեռանիցիք»:

Ծննդոց Բ. 15-17-ի եւ Գ. 1-3-ի այս ընդարձակաբանությունը, թվում է, թե ծանրաբեռնված է ոչ պիտանի հավելումներով: Հունական բնագիրը, սակայն, ավելի ընդարձակված է: Այս փաստը վկայում է հայկական տարբերակի բնագիր լինելու մասին: Միդրաշի հեղինակն իր ուշադրությունը կենտրոնացրել է Ծննդ. Գ. 5 «բացել աչքերը» աստվածաշնչյան արտահայտության վրա, որը, հարկապես մարգարեական ավանդության մեջ ունի խորհրդաբանական նշանակություն: Սաբանա-փորձիչը կնոջ հետ խոսելիս ներշնչում է, որ Աստվածային պատվիրանների պահպանությունը կույր է դարձնում նրան դրախտային կյանքի գեղեցկության հանդեպ: «Կենդանի է Տէր» կրկնակի երդմամբ Սաբանան կասկածի տակ է առնում Աստծո ճշմարտացիությունը՝ Եւայի մեջ արգելված պտուղը ճաշակելու ցանկություն արթնացնելով. «ԽԴ.18.1 Յայնժամ ասէ աւծն. Կենդանի է Տէր, զի մեծ հոգամ վասն ձեր զի իբրեւ զանասուն էք, վասն զի խորեաց Աստուած ի ձեռք, այլ ոչ կամիմ ես եթէ քզէք լինիցիք. աղէ գնա դու եւ կեր ի ծառոյ անտի. եւ տեսանես զինչ լինելոց է քեզ պարիս: ԽԴ.18.2 Եւ ասեմ ցնա. Երկնչիմ գուցէ մեռանիմ որպէս ասաց ցմեզ Աստուած: ԽԴ.18.3 Պարասխանի եր աւծն հանդերձ Սաբանայիս եւ ասէ ցիս. Կենդանի է Տէր, զի ոչ մեռանիք, այլ յորժամ կերակրիք բանին աչք ձեր եւ լինիցիք որպէս զԱստուած ճանաչել զբարի եւ զչար. ԽԴ.18.4 Բայց զիպաց Աստուած եթէ նմանողք լինիք նմա. նենգեաց ձեզ, զի ասաց եթէ մի կերակրիք ի նմանէ. ԽԴ.18.5 եւ ասէ. Նայեա՛ դու ի ծառն եւ տես զինչ փառք են շուրջ զծառովն: Ասեմ ցնա. եւ իբրեւ հայեցայ ի ծառն եւ Կեսի զի մեծ փառք էին շուրջ զնովա. ԽԴ.18.6 Բարի է ծառն եւ հաճոյ թուեցաւ յաչս իմ, բայց գնալ եւ առնուլ ի մրգոյ անտի ոչ կարեմ. երկնչիմ. աղէ եթէ ոչ երկնչիս դու բեր ինձ ի մրգոյ անտի եւ կերայց, զի ծանեաց եթէ իցեն բանք քո ճշմարիտ թէ ոչ. կոչեաց այնուհետև աւծն զիս եւ ասէ. Ե՛կ բախ գոռուն ինձ եւ մտից եւ քաց քեզ ի մրգոյ անտի»:

Նկարագրության մեջ նկատելի է, որ օձն այսպիսի Չարի կարարյալ մարմնացումն

է, և ևնարավոր չէ «գործիքի» դերը անջարել այն «գործածողից»: Միաժամանակ, սակայն, պարսկահռոմի հեղինակը հարույկ ընդգծում է Սապանայի գործության սահմանափակությունը, այն աստիճան, որ նա չի կարողանում միայնակ դրախտ մտնել: Սապանան ստիպված է դիմել կնոջ օգնությանը, որը ևս դառնում է նրա գործիքը²⁷: Պարտումի շարունակությունը շրջանցում է Եւայի միջոցով դրախտի դարպասների բացման պահը²⁸, որը կարծես թե որոշիչ պերպ է լինել մեղքի ծագումնաբանության մասին դարողություններում: Նեղինակին ավելի գրավում է Ադամին խաբելու համար կնոջը որպես գործիք օգտագործելու գաղափարը, որովհետև միայն Ադամի մեղքը կործանարար հետևանքներ պիտի ունենար մարդկության համար: Այսպեղ ուշադրության արժանի է սապանայական գայթակղության «գործընթացի» նկարագրման վարպետությունը: Պարողը ճաշակելու ցանկություն արթնացնելով՝ Սապանան ստիպում է Եւային եղվել, թե «ոչ նենգեսցես առն քո Ադամայ»: Փորձի նենգությունն արքանայություն է նրանով, որ մեղսագործության պարճառ հանդիսացող էական խաբելությունը նա ներկայացնում է որպես մարդու իրավունքների մասին մարտնչություն: Ահա մի հարված նրա սուր փաստարկումից. «ԽԴ.19.1a Իբրեւ եկն եմուր գնաց սակաիկ մի ի մեջ դրախտին և գրեղի առ. ԽԴ.19.1b ասեմ ես. ...զի առեր գրեղի. ԽԴ.19.1c ասե ցիս. գուցե իբրեւ քեզ քամ ուրել, բանին աչք քո և լինիցիս իբրեւ զԱստուած, նենգեսցես Ադամայ և ոչ քաս ուրել նմա ի մրգոյ անտի և լինի նա իբրեւ գանաստն առաջի քո. ԽԴ.19.1d այլ եթե կամիս դու երդուիր ինձ ճշմարիտ եթե քայցես նմա ուրել և ոչ նենգեսցես առն քո Ադամայ: ԽԴ.19.2 Ասեմ ցնա. ...երդումն ես ինչ ոչ գիտեմ թե որով երդնում քեզ, բայց գոր գիտեմ ասեմ քեզ. քնկարք դրախտի և քերովբէիք և սերովբէիք, և որ նտրի Նայր ի յերկինս և իջանել ի դրախտս. թե կերայց և ծանեայց գամենայն ինչ ոչ խորեցից, այլ քաց ուրել առն իմում Ադամայ: [ԽԴ.]19.3 Իբրեւ երդմամբ ընկալաւ զիս, ապա առաջնորդեաց ինձ և քարաւ զիս ի ծառ անտր, և ել ինքն ի ծառն, և եղ նա զխաբելութիւնն ի պտղոյ նորա, այսինքն ցանկութիւն մեղաց, պտնկութիւնք, շնութիւնք, ագանութիւնք. և խոնարհեցոյց զփս ծառոյն, մինչև երկիր. և առի յայնժամ ի մրգոյ անտի և կերայ»: Այս պարտումը հիշեցնում է սուրբգրային բնագրի ընդարձակաբանությունը, որը հայտնի է «Նոբելյանական» պարսկահռոմ գրքից. «Եւ երես կինն զի բարի էր և հաճոյ աչաց հայելոյ և պարողք նորա գեղեցիկ ի քնասանել. և առ ի պտղոց նոցա և եկեր» (Գ. 20): Այսպեղ, սակայն, կան նոր քարքեր, որոնք զարգացել են ուշ շրջանի ռաբբինական գրականության մեջ: Միշնայում, կռապաշարության մասին հարվածը (Abod Zaza 22b) վեր է հանում թունավորված պտղի գաղափարը, որպեսզի բացարարի մարդկային սրտում առկա հակվածությունը դեպի չարը: Այս հագագաղան վստահաբար հիմնված է Իմաստության գրքի «Նախանձու բանաարկութիւն եմուր մահ յաշխարհ» (Բ. 24) պնդման վրա: Սա սապանայական գայթակղության պարճառ պարզելու առաջին փորձն է: Միջկարակարանյան գրականությունը լի է այս «նախանձի» էության մասին հեռուն գնացող խորհրդածություններով: Սապանան նախանձում է նա-

27 Տե՛ս B. Teyssedre, *Nascita del diavolo. Da Babilonia alle grotte del Mar Morto*, Geneva, 1992, էջ 379:

28 Նուարեն բնագրում Եւան հարակ պնդում է. «...քացիցի նրա առջեւ, իսկ նա մտավ դրախտ»:

խաձնողներին նրանց երջանկության²⁹ և հրեշտակային կերակուրների համար: Դրդապարճառներից մեկն էլ աշխարհին փրկելու³⁰ կամ Ադամին իրեն ենթարկելու ցանկությունն է³¹:

«Ապաշխարություն Ադամայ»-ն կարծես թե ակնարկում է, որ մեղքի պարճառը սեռական ցանկասիրությունն է³²: Այդ է հուշում թզենու փրկելու փնտրողիկան Ծննդ. Գ. 7-ում³³: Ամեն դեպքում, էականն այսպեղ նախաձնողների կողմից Աստծո փառքը կորցնելն էր. «ԽԴ.20.1 Եւ ի ժամուն այնմիկ գիտացի ես աշարք իմովք եթէ մերկացայ ես ի փառացն գոր զգեցեալ էի. այնուհետև սկսայ լալ եւ ասեմ. ԽԴ.20.2 ...ի՞նչ արարեր ինձ այլ ոչ եւս ճգնէի եւ վասն մարտին գոր եղեալ էր ինձ թշնամի: Յայնժամ գիտացի այնուհետև եթէ այս առաջնորդեսցէ ինձ յանդուռս դռնիս: ԽԴ.20.3 ...այս իբրեւ արար Սաբանայ էջ ի ծառայ անտի, եւ եղև թագստեա ի դրախտին. ԽԴ.20.4 եւ ես խնդրէի ի դրախտի յանտ, յիմում կողմանս փրկեսու ծառայ ծածկել զմերկություն իմ եւ ոչ զփանելի, քանզի ի ժամուն այնմիկ փրկեստապի լեալ էր ամենայն ծառք դրախտին, բայց միայն ի թզենոյ անտի. ԽԴ.20.5a առի եւ ծածկեցի զմերկություն իմ. եւ կացի առ ծառայն յորմէ կերայ. ԽԴ.20.5b երկեա որդեակ իմ Սէթ վասն երդմանն գոր երդուայ եթէ փաց ուրել առն իմում Ադամայ»:

Սա Սաբանայի մասին վերջին հիշարկումն է. Ադամի գայթումն ու անկումն արդեն կկայանան նաև առանց Սաբանայի «Ֆիզիկական ներկայության»:

3. Ադամի ու Եւայի կերպարները հայ պարականոն գրականության մեջ. Հայ պարականոն գրականության մեջ առանձնակի շեշտով է բացահայտվում մարդկային բարձր կոչման գաղափարը: «Ապաշխարություն Ադամայ»-ում Ադամը խոստովանում է, որ դրախտը փրկված էր իրեն և իր կնոջը, իսկ պահպանության համար իրենց փրամարտության փակ փաստերի և հրեշտակ ունեին (32-33): Սաբանայի խոստովանությունից բացահայտվում է, որ մարդը դրախտում հրեշտակներից բարձր շնորհ ստացավ: Սաբանան, որպես անկյալ հրեշտակ, խոստովանում է. «ԺԳ.1 Դարասխանի եր Սաբանայ եւ ասէ. Դու ինձ ինչ ոչ արարեր, բայց ես վասն թո եկի յայսչափ, յորում առուր դու սրեղծար. զի ես այն ար ելի: ԺԳ.2 Իբրեւ փչեաց Աստուած զոգին իւր ի ձեզ առեր դու զմանություն պարկերի նորա. եկն այնուհետև Միքայել եւ եր քեզ երկիր պագանել առաջի Աստուծոյ: Եւ ասէ Աստուած ցՄիքայել. Ահա, արարի զԱդամ ի նմանություն պարկերի իմում:

ԺԴ.1 Յայնժամ Միքայել կոչեաց զամենայն հրեշտակսն, եւ ասէ ցնոսա Աստուած. [MS1] Եկայք երկիր պագէք Աստուծոյ գոր արարի: ԺԴ.2 Եպագ երկիր նախ Միքայել. կոչեաց զիս եւ ասէ. Երկիր պագ եւ դու Ադամայ: ԺԴ.3 Ասեմ եւ ես. Ի բաց գնա դու Միքայել, ոչ պագանեմ եւ երկիր յեկոնոյ իմոյ, զի առաջ ես եմ, զի՞նչ արժան է ինձ դմա երկիր պագանել:

29 Հովսեփոս Ֆրավիոս, Տրեական հնություններ, Ա. 41:

30 Սլավոնական Եւոք, 29, 4 եւ այլն:

31 Gen R 18. փնտ W. Foerster, ofis, TWNT V, էջ 575:

32 Հունարեն բնագրում «epithymia»:

33 Հմմտ. Gen R 15, 7; Jaskinia skarbów 6:

ԺԵ.1 Լուան և այլ հրեշտակներ որ ընդ իս Էին և հաճոյ թուեցաւ բանք իմ և ոչ պագին թեզ երկրպագութիւն Ադամն»:

Քննության ենթակա այս հարվածում կարելի է հանդիպել հին և նորկրակարանյան ձևավորված ու իրար միացած փաթեթեր ավանդույթների: «Vita Adamae»-ում բիր-լիական ավանդապատմի նմանություններն են, նախ՝ մարդու որպես «Աստծո պարկեր և նմանություն» որակումը (Ծննդ. Ա. 26-27, Vita Adamae § 13), երկրորդ՝ Սալաման-յի պարասխանը, որն օգտագործում է Եսայա գրքի արտահայտությունը՝ «Ելից յերկինս ի վերայ բան զաստիճա երկնից Աստուծոյ բարձրացուցից³⁴ զաթոռ իմ» (Ես. ԺԴ. 13, Vita Adamae § 15), վերջապես՝ «գլխեանց բնակութիւն»-ից անկյալ չար ոգիների արարա-սումը. «Յիշեցուցանել ձեզ այսուհետև կամ է ինձ որ գլխեթղ զամենայն, զի Աստուած միանգամ զժողովուրդն փրկեաց յԵգիպտոսէ, երկրորդ անգամ զանհաւարսն կորոյս: Եւ զհրեշտակս ուր ոչ պահեցին զիրեանց բնակութիւնն, ի դարասարանս մեծի ատուրն մշրնջենաւոր կապանօք պահեաց ի խաւարի» (Նուդ. Ե. 6, Vita Adamae § 16):

«Ապաշխարութիւն Ադամայ»-ում յուրօրինակ մտքով է նաև հրեշտակների երկրպա-գությունը Ադամին՝ որպես «Աստծոյ»: Լադինական բնագիրն այս արտահայտությունն ավելի մեղմ է թարգմանում. «adorate imaginem Dei» «խոնարհվե՛ք Աստծո պատկերին»: Սալաման ըմբաստանում է Աստծո կողմից մարդու կոչման այսպիսի բարձրացման դեմ: Վ. Խրոստովսկին³⁵ նշում է, որ «սալամանյի արարքի դրդապատճառները Էզրեզիկների և աստվածաբանների մշտական որոնումների և հեղափոխության առարկան են եղել»: «Պիեկե դե Ռաբբի Էլիեզեր» ռաբբինական երկի 13 և 21-ում (խմբագրվել է Ը.-Թ. դդ.) պահպանվել է անկյալ հրեշտակների անդրաշխարհյան խորհրդակցության նկարագ-րությունը, որտեղ նրանք դավ են նյութում մարդու դեմ, ով իրենց գերազանցում է այն աստիճան, որ կարող է կենդանական աշխարհին անուններ տալ, այն դեպքում, երբ իրենք գրկված են այդ հնարավորությունից³⁶:

«Ապաշխարութիւն Ադամայ»-ն երևան է հանում Ծննդ. Գ. 19-ի փրկ գրած թարգոմ-ական (Աստվածաշնչի արամեերեն թարգմանություն) ավանդության իր ծանոթությունը, որտեղ ավելացված է վերջին դարաստանի ժամանակ մեռելների հարության գաղա-փարը. «...բայց վեր կելնես հողից ու մեռելներից հարություն կառնես, հետո հաշիվ կտաս քո բոլոր գործերի համար»: Պարականոն գործը խորացնում է այս ավանդությունը՝ Կե-նաց ծառի պտղի խնդրանքի դիմաց Աստծո՝ Ադամին տված պարասխանը թեև բացա-սական, սակայն լիովին պարճառաբանված է. «ԽԴ.28.2 Դարձաւ Ադամ և ասէ ցԱստու-ած. Տէ՛ր իմ, աղաչեմ զթեզ, փո՛ր ինձ ի ծառոյն կենաց զի կերայց ես մինչ չեմ եղեալ իցեմ ի դրախտէս: ԽԴ.28.3 Եւ ասէ Տէր ցԱդամ. Ոչ ունիս առնուլ ի նմանէ ի կեանս քո, բանզի հրաման եպու սերորէից շուրջանակի պահել զնա զինուք վասն քո. զի այլ մի ես ճաշա-կեսցես դու ի նմանէ և լինիցիս անմահ, և ասես եթէ անա որ ոչ մեռայց, և պարծեսցիս

34 Տե՛ս գրաբար բնագրի համապատասխան համարի տողաբանք:

35 W. Chrostowski, *Anatomia pokusy*, p. 199, 1.

36 Տե՛ս K. Bardski, *Grzech Adama i Ewy w midraszowej tradycji Rabbi Eleazara*. տե՛ս Miłość jest z Boga (Studium ofiarowane ks. prof. dr hab. J. Lachowi), Warszawa, 1997, էջ 31-40:

ի նմա, և յաղթեսցես դու պարերագմին, գոր եղեալն է թշնամոյն ընդ քեզ. ԽԴ.28.4 այլ իբրև եղանիցես դու ի դրախտէ անտի, և պահեսցես զանձն քո ի չարախառութենէ, ի պոռնկութենէ, ի շնութենէ, ի կախարդութենէ, յարծաթսիրութենէ, ի զաւշաքաղութենէ, և յամենայն մեղաց. և ապա յարիցես ի մահուանէ անտի, որ լինելոց է յարութիւն. և յայնժամ քացից քեզ ի ծառոյն կենաց և լինիս դու անմահ մինչեւ յաւիտեան»:

«Եւայի խոստովանության» վերջում գերեզմված այս հայտնությունը կենտրոնական տեսարանի ԽԴ.20 հետ կապված է կրկնակի ներփակումով: Կապող առաջին օղակը մեղքի հետևանքների ցուցակն է՝ Սաբանայի հանցավոր գործողության հանցավոր պարտությունը: Երկրորդը՝ պարերագմի մասին հիշատակությունն է, որ վարում է Թշնամին: Այսպիսով, Ծնող. Գ. 15-ը, նախաավերարանի սինագոգյան ծիսական ավանդության լույսի տակ ընթերցված, կազմում է «Ապաշխարություն նախահարն մերոյ Ադամայ»-ի վերջաբանը: Սաբանան՝ մարդկային ցեղի թշնամին, վերջնականապես կջախջախվի մահվան և դժոխքի հետ: Ադամի սերունդը, սակայն, պետք է խոստովի առաջին անկման թունավոր պարտությունը: Ամենախոսքի երաշխիքը Կենաց ծառի պարտը կլինի, որ պիտի պահպանվի մեսիական ժամանակների համար:

Ադամի ու Եւայի մասին պարականոն գրականության մեջ կարմիր թելի նման անցնում է անկումից հետո մարդու դառը ճակատագրի թեման: Անկումից հետո Ադամի ու Եւայի կյանքը լի էր ցավով ու փառապանքով: Պարականոն գրականությունն այդ ցավն ու փառապանքը զանազան կերպով է ցուցադրում:

«Ապաշխարություն Ադամայ»-ում Աստծո՝ Ադամին տրված կանխատեսության մեջ ասվում է. «ԼԴ.8.2 Եւ ասէ Աստուած. փոխանակ զի անցեր զոխտիս իմով. ածից ի վերայ մարմնոյ քո եւաթանասուն ախր. ցաւ աչաց և ականջաց և ամենայն զառուածոց դնչորնգունս և համարեցաւ զիս ի վիշտս հիւանդութեանց որ պահին ի շրեմարանս զի արձակեսցէ զնոսա Աստուած ի յերին ժամանակս»: Ահա թե ինչու է Ադամի ու Եւայի կյանքը ներկայացվում որպես լաց ու կոծով լի մի կյանք: Որպես փառապանքի ու լացի պարծառ գիրքը նշում է.

1. Աստծո դեմ գործված մեղքը,
2. Լույսից զրկվելը,
3. Դրախտից արտաքսվելը,
4. Անիծյալ աշխարհ մուտք գործելը,
5. Մահկանացու դառնալը,
6. Աստծուն իրենց դեմ հանելը,
7. Շնորհներից զրկվելը,
8. Կենդանիներին հավասարվելը,
9. Երկու զավակների կորուստը,
10. Ավագ որդուն որպես եղբայրասպան՝ Աստծու կողմից դաբապարտված ու պարտված տեսնելը³⁷:

37 Sten J. Issaverdens, նշվ. աշխ., էջ 68:

«Ապաշխարություն Ադամայ»-ն ավարտվում է Ադամի ու Եւայի մահվան և թաղման նկարագրությամբ: Նրանց թաղումը ծխական բնույթ ունի: Թաղման արարողությանը մասնակցում են հրեշտակները: Արարողության ժամանակ. «ԽԸ.39.1 Եկն Աստուած ամ մարմինն Ադամայ ուր կայր մեռեալ, քրքրմեցաւ Աստուած յոյժ ևս ասէ ի ձայն քաղցրութեան. Ո՛ր Ադամ. զի՛նչ արարեր զայդ. եթէ պահեալ էր թո զպարտիրանն իմ, ոչ ուրախ լինէին ի վերայ թո, ոյք իջուցին զքեզ յայդ քեղիդ. ԽԸ.39.2 Բայց զուրախութիւն նոցա դարձուցից ի քրքրմութիւն. և զքրքրմութիւն թո դարձուցից յուրախութիւն. արարից զքեզ սկիզբն ուրախութեան և նստեցուցից զքեզ յաթոռ նորա, որ խաբեացն զքեզ ԽԸ.39.3 և արկից գնոսա ի քեղի խաւարի և մահու»:

Այս շարակարգում է գրնովում մեռելների հարության գաղափարը: «ԽԸ.41.1 Կոչեաց Աստուած գմարմինն Ադամայ ի հողոյ անքի, և ասէ. Ադամ, Ադամ: Ասէ մարմինն Ադամայ ցեղոյն. Պարապխանի քուր ևս ասա թէ ահաւասիկ Տէր: ԽԸ.41.2 Եւ ասէ ցնա Տէր. Ահա, որպէս ասացի քեզ թէ Ադամ հող ես և ի հող դառնաս, ԽԸ.41.3 Բայց յարութիւն գոր խոստացայ յարուցից զքեզ ի նմին»:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ թեև պարականոն գրականությունը համարվել է հակականոնական և շար հաճախ դարապարպելի, այնուամենայնիվ, դրա որոշ աստվածաբանական մտքիվներ ու դրվագներ արպացովել են հերագայի թե՛ քրիստոնական և թե՛ հրեական մեկնողական երկերում: Ընդ որում, պարականոն գրականության մտքիվների վերլուծությունը շար հաճախ կարող է օգտակար դերակատարություն ունենալ սուրբգրային կանոնական բնագրի ընթերցման ճանապարհին: Այս առումով բացառություն չէ նաև հայ ավանդությունը, որպես Շինդ. Գ. 1-7-ը վերափոխված է «ադամական գրականություն» պայմանական անվան քակ՝ յուրօրինակ մեկնություններ առաջադրելով սուրբգրային ուսումնասիրությունների ոլորտի մասնագետներին: